342.8
3...11

1927

01 MAR 2010

342.8
Հ-11

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ՀՐԱՀԱՆԳ

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՅԵՎ

## ՀԱՇՎԱՌՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ, ՁԵՎԵՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 Թ.

342.8
Հ-11
14662
1003

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

# ՀՐԱՀԱՆԳ

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ

ՅԵՐԵՎԱՆ 1927 Թ.

## ՀՐԱՀԱՆԳ

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ԳԼՈՒԽ I.

### ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

*1. Գյուղական և քաղաքային խորհուրդների, գավառակային ու գավառային համագումարների, ինչպես և ՀՍԽՀ խորհուրդների համագումարի ընտրությունները կանոնավոր և ժամանակին կատարելու նպատակով կազմվում են գյուղական, գավառակային, գավառային և քաղաքային ընտրական հանձնաժողովներ։*

*2. Հայաստանի ՍԽՀ տերրիտորիայի վրա ընտրական կամպանիայի ընդհանուր ղեկավարության և ընտրական հանձնաժողովներին հրահանգելու, ինչպես և 1 հոդ. հիշված ընտրական հանձնաժողովների գործողությունների դեմ տրված գանգատները քննելու համար՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կից կազմվում է Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով, որի կազմը վորոշվում և հաստատվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից։*

*3. Գավառային ընտրական հանձնաժողովները բաղկացած են 10 հոգուց և ունեն հետևյալ կազմը.—Նախա-*



*գահ, վորին Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի առաջարկությամբ հաստատում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը, մեկական ներկայացուցիչ համապատասխան գործադիր կոմիտեյից, տեղական քաղաքային խորհրդից, արհեստակցական միությունների բյուրոյից, Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունից, ՀԿԿ (բ) ԿԿ բանվորուհիների ու գեղջկուհիների բաժնից, ազգային փոքրամասնություններից, յերկու ներկայացուցիչ փոխադարձ օգնության գյուղացիական ընկերություններից և մի ներկայացուցիչ կարմիր բանակից ու նավատորմից (զորամասեր յեղած վայրերում)։*

*4. Գավառակային ընտրական հանձնաժողովները բաղկացած են 10 հոգուց և ունեն հետևյալ կազմը.—Նախագահ, վորին նշանակում է համապատասխան գավառային գործադիր կոմիտեն, յերկու ներկայացուցիչ գավառակային գործադիր կոմիտեյից, մեկական ներկայացուցիչ արհեստակցական միությունների բյուրոյի տեղական խորհրդից, Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունից, գեղջկուհիների պատգամավորական ժողովներից, ազգային փոքրամասնություններից, յերկու ներկայացուցիչ փոխադարձ օգնության գյուղացիական ընկերությունից և մի ներկայացուցիչ կարմիր բանակից ու նավատորմից (զորամասեր յեղած վայրերում)։*

*5. Գյուղական հանձնաժողովները բաղկացած են 9 հոգուց և ունեն հետևյալ կազմը.—Նախագահ, վորին նշանակում է գավառակային գործադիր կոմիտեն, յերկու ներկայացուցիչ համապատասխան գյուղխորհրդից, մեկական ներկայացուցիչ արհեստակցական միություններից, Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունից, գեղջկուհիների պատգամավորական ժողովներից, յերկու ներկայացուցիչ փոխադարձ օգնության*

35.654

09 SEP 2013

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 1328 Գրատ. 518 բ. Տիրաժ 5000

# ՎՈՐՈՇՈՒՄ ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1927 թ. դեկտեմբերի 21-ին

Ի փոփոխումն և ի լրացումն ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության 1926 թ. դեկտեմբերի 22-ի «Քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրությունների և խորհուրդների համագումարներ հրավիրելու մասին» հրահանգի (Ո. կ. ժ.—1927 թ. № 2, հոդ. 8) Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը ՀՍԽՀ Սահմանադրության 87 րդ հոդ. և Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1928 թ. խորհուրդների վերընտրությունների վերաբերյալ հրահանգի համաձայն ՎՈՐՈՇՈՒՄ Ե հաստատել և կիրարկության դնել Հայաստանի ՍԽՀ սահմաններում քաղաքային և գյուղական խորհուրդների ընտրության և խորհուրդների համագումարներ հրավիրելու վերաբերյալ հետևյալ հրահանգը.—

ՀՐԱՀԱՆԳ

# ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԼՈՒԽ I.

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

1. Գյուղական և քաղաքային խորհուրդների, գավառակային ու գավառային համագումարների, ինչպես և ՀՍԽՀ խորհուրդների համագումարի ընտրությունները կանոնավոր և ժամանակին կատարելու նպատակով կազմվում են գյուղական, գավառակային, գավառային և քաղաքային ընտրական հանձնաժողովներ։

2. Հայաստանի ՍԽՀ տերրիտորիայի վրա ընտրական կամպանիայի ընդհանուր ղեկավարության և ընտրական հանձնաժողովներին հրահանգելու, ինչպես և 1 հոդ. հիշված ընտրական հանձնաժողովների գործողությունների դեմ տրված գանգատները քննելու համար՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կից կազմվում է Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով, վորի կազմը վորոշվում և հաստատվում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից։

3. Գավառային ընտրական հանձնաժողովները բաղկացած են 10 հոգուց և ունեն հետևյալ կազմը.—Նախագահ, վորին Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի առաջարկությամբ հաստատում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը, մեկական ներկայացուցիչ համապատասխան գործադիր կոմիտեյից, տեղական քաղաքային խորհրդից, արհեստակցական միությունների բյուրոյից, Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունից, ՀԿԿ (բ) ԿԿ բանվորուհիների ու գեղջկուհիների բաժնից, ազգային փոքրամասնություններից, յերկու ներկայացուցիչ փոխադարձ օգնության գյուղացիական ընկերություններից և մի ներկայացուցիչ կարմիր բանակից ու նավատորմից (զորամասեր յեղած վայրերում)։

4. Գավառակային ընտրական հանձնաժողովները բաղկացած են 10 հոգուց և ունեն հետևյալ կազմը.—Նախագահ, վորին նշանակում է համապատասխան գավառային գործադիր կոմիտեն, յերկու ներկայացուցիչ գավառակային գործադիր կոմիտեյից, մեկական ներկայացուցիչ արհեստակցական միությունների բյուրոյի տեղական խորհրդից, Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունից, գեղջկուհիների պատգամավորական ժողովներից, ազգային փոքրամասնություններից, յերկու ներկայացուցիչ փոխադարձ օգնության գյուղացիական ընկերությունից և մի ներկայացուցիչ կարմիր բանակից ու նավատորմից (զորամասեր յեղած վայրերում)։

5. Գյուղական հանձնաժողովները բաղկացած են 9 հոգուց և ունեն հետևյալ կազմը.—Նախագահ, վորին նշանակում է գավառակային գործադիր կոմիտեն, յերկու ներկայացուցիչ համապատասխան գյուղխորհրդից, մեկական ներկայացուցիչ արհեստակցական միություններից, Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունից, գեղջկուհիների պատգամավորական ժողովներից, յերկու ներկայացուցիչ փոխադարձ օգնության

գյուղացիական ընկերություններից և մի ներկայացուցիչ կարմիր բանակից ու նավատորմից (զորամասեր չեղած վայրերում)։

6. Քաղաքային ընտրական հանձնաժողովները կազմվում են բոլոր քաղաքներում, քաղաքատիպ վայրերում և բանվորական ավաններում հետևյալ կազմով.—Նախագահ, վորին հաստատում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի առաջարկությամբ, յերկու ներկայացուցիչ համապատասխան քաղաքային խորհրդից, մեկական ներկայացուցիչ արհեստակցական միություններից, կարմիր բանակից, Հայաստանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունից, մի ներկայացուցիչ բանվորուհիներից, վորն ընտրվում է աշխատավորուհիների համաքաղաքային պատգամավորական ժողովում, և մի ներկայացուցիչ ազգային փոքրամասնություններից։

**Ծանոթություն.** — Յերևան և Լենինական քաղաքներում համապատասխան քաղխորհուրդների վորոշմամբ կարող են կազմվել շրջանային ընտրական հանձնաժողովներ այս հոդվածով նախատեսված կազմով։

Շրջանային ընտրական հանձնաժողովների նախագահները հաստատվում են համապատասխան քաղաքային խորհուրդների նախագահության կողմից։

7. Այն վայրերում, վորտեղ բացակայում են մի քանիսը այն հասարակական կազմակերպություններից, վորոնց ներկայացուցիչները պետք է մտնեն համապատասխան ընտրական հանձնաժողովների կազմի մեջ, վերադաս գործադիր կոմիտեներին վերապահվում է իրավունք վորոշելու, թե վոր կազմակերպությունների ներկայացուցիչները պետք է փոխարինեն բացակայող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին։

8. Ընտրական հանձնաժողովները կազմվում են ընտրական կամպանիայի տևողության շրջանի համար այն



ժամանակամիջոցներով, վորոնք սահմանվում են վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից, և լուծվում են նույն հանձնաժողովների կողմից սահմանված ժամանակամիջոցներում, բայց վոչ ուշ քան համապատասխան տերիտորիայի վրա ընտրական կամպանիան վերջանալուց հետո մի ամսվա ընթացքում։

## ԳԼՈՒԽ II.

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

9. Ընտրական հանձնաժողովների իրավունքները և պարտականություններն են.

ա) հսկել, վոր ընտրությունները համապատասխան տերիտորիայի վրա կատարվեն օրինական կարգով ու ժամանակին, և կիրառվեն ընտրական կամպանիայի համար սահմանված կանոնները, նորմաները և ժամկետները.

բ) սահմանել ստորադաս ընտրական հանձնաժողովները կազմելու և լուծելու ժամանակամիջոցները.

գ) ղեկավարել ստորադաս ընտրական հանձնաժողովների և նրանց լիազորների աշխատանքները ընտրությունների վերաբերմամբ.

դ) հարց հարուցանել համապատասխան գործադիր կոմիտեների առաջ ստորադաս ընտրական հանձնաժողովների լուծման, նրանց առանձին անդամներին մերժելու, ինչպես և նրանց վորոշումները վերացնելու մասին.

ե) պահանջել ստորադաս ընտրական հանձնաժողովներից հաշվետվություն իրենց կատարած աշխատանքների մասին.

զ) ներկայացնել վերադաս ընտրական հանձնաժողովներին և համապատասխան գործադիր կոմիտեներին տեղեկություններ և ամփոփումներ ընտրությունների ընթացքի և արդյունքի մասին, և մասնավորապես ընտրություններին մասնակցած ընտրողների թվի մասին.

*ը) գործուղել իր ներկայացուցիչներին ստորադաս ընտրական հանձնաժողովների աշխատանքներին և ընտրական կամպանիայի ընթացքին իրազեկ լինելու համար.*

*թ) քննել ստորադաս ընտրական հանձնաժողովների գործողությունների դեմ տրված բողոքները և գանգատները։*

*10. Գյուղական և քաղաքային ընտրական հանձնաժողովները, իսկ այն քաղաքներում, որտեղ կազմված են շրջանային ընտրական հանձնաժողովներ,— շրջանային հանձնաժողովները բացի այս հրահանգի 9-րդ հոդ. «ա» և «զ» կետերում հիշված ֆունկցիաներից պարտավոր են.*

*ա) կազմել, քննել, ստուգել և հրապարակել ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակը.*

*բ) ուղարկել անվանական ընտրական ծանուցագրեր ընտրողներին և այլ միջոցներ ձեռք առնել ընտրական ժողովների տեղի ու ժամանակի մասին հայտարարելու համար.*

*գ) բաժանել տերրիտորիան և ընտրողներին՝ ըստ ընտրական շրջանների.*

*դ) կազմակերպել ընտրական ժողովներ.*

*ե) նշանակել լիազորներ ընտրական ժողովներին նախագահելու համար։*

*11. Ընտրական հանձնաժողովները չունին առանձին տեխնիքական ապարատ, այլ իրենց վրա դրված պարտականությունները կատարելու համար օգտվում են համապատասխան գործադիր կոմիտեյի կամ գյուղական խորհրդի ապարատից։*

*12. Ընտրական հանձնաժողովի անդամները իրենց աշխատանքի համար առանձին վարձատրություն չեն ստանում։*



## ԳԼՈՒԽ III.

## ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*13. Թե ընտրողների և թե ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակները կազմելիս և ստուգելիս՝ ընտրական հանձնաժողովները պետք է նկատի ունենան, որ ՀՍԽՀ Սահմանադրությունը զրկում է ընտրական իրավունքներից առանձին անձանց և ազգաբնակության առանձին խմբերին, այն է.*

*ա) այն անձանց, որոնք շահառության նպատակով օգտվել են կամ ներկայումս օգտվում են վարձու աշխատանքից.*

*բ) այն անձանց, որոնք ապրել են կամ ներկայումս ապրում են անաշխատ եկամուտներով, ինչպես և նրանց, որոնք պարապել են կամ այժմ պարապում են առևտրով.*

*գ) այն անձանց, որոնք ըստ իրենց դասակարգային դրության ընտրությունների մոմենտին կամ իրենց անցյալ գործունեությամբ համաձայն ՀՍԽՀ Սահմանադրության 86 հոդ. պատկանում են ընտրական իրավունքներից զրկվածների կատեգորիային։*

*14. Քաղաքացիների առանձին կատեգորիաներից չեն կարող օգտվել ընտրական իրավունքներից.*

*ա) հողագործները, որոնք գործադրում են սեզոնային կամ մշտական վարձու աշխատանք այնպիսի չափով, որը լայնացնում է նրանց տնտեսությունը, դուրս բերելով աշխատավորական տնտեսության սահմաններից։*

**Ծանոթություն**—*Ներկա դեպքում աշխատավորական տնտեսության հիմնական հատկանիշն է վարձու աշխատանքի օժանդակ բնույթը և աշխատունակ անդամների պարտադիր մասնակցությունը նրա առօրյա աշխատանքներին։*

*բ) հողագործները, որոնք հողագործական տնտեսության հետ միասին ունեն նաև արհեստագործական և*

արդյունաբերական ձեռնարկություններ (ջրաղաց, ձիթհանք, դինդ և այլն), որոնք գործում են մշտական կամ սեզոնային վարձու աշխատանքի կիրառմամբ և չեն համապատասխանում այս հրահանգի 15-րդ հոդ. «ը» կետի պայմաններին.

գ) հողագործները, որոնք հողագործական տնտեսության հետ միասին զբաղվում են, իբրև արհեստ, նաև անասունների, գյուղատնտեսական և այլ արտադրանքների գնումով և վերավաճառքով (շահագետներ).

դ) այն անձինք, որոնք ստրկացնում են շրջապատող բնակչությունը սիստեմատիկ կերպով տալով նրան օգտագործման համար իրենց ունեցած գյուղատնտեսական մեքենաները, անասունները և այլն, կամ մշտապես զբաղվում են բնակչությանը ստրկացուցիչ պայմաններով վարկ (ապրանքային կամ դրամական) հայթայթելով.

ե) տնայնագործները և արհեստավորները, որոնք օգտվում են մշտական վարձու աշխատանքից, յեթե նրանք չեն վարում աշխատավորական տնտեսություն (15-հոդ. «ի» կետ).

զ) արդյունաբերական տիպի ձեռնարկությունների տերերը, ձեռնարկուները և կապալառուները, որոնք շահագործում են ազգաբնակությանը, տալով այս կամ այն աշխատանքները տանը կատարելու համար.

ը) արդյունաբերական և գործարանային տիպի ձեռնարկությունների տերերը և վարձակալները.

թ) մասնավոր առևտրականները, վերագնորդները և առևտրական միջնորդները.

ժ) Դաշնակցական կառավարության անդամներ — մինիստրները, մինիստրների օգնականները, Հայաստանի Փրկության Կոմիտեյի անդամները, դաշնակցական կառավարության օրոք ներքին գործոց մինիստրության հատուկ բաժնում ծառայած հրամանատարական ու վարչական



անձինք, դաշնակցական արտակարգ հանձնաժողովների ու արտակարգ դատարանների նախագահներն ու անդամները և նրանց դատախազներն ու քննիչները, ինչպես նաև բանտային վարչության պետերը և բանտապետներն ու նրանց օգնականները.

ի) հակահեղափոխական բանակի նախկին սպաները և զինվորական աստիճանավորները, ինչպես և հակահեղափոխական խմբերի ղեկավարները, խմբապետները և մաուզերիստները.

**Ծանոթություն 1.**—Այս հոդվածի «ժ» և «ի» կետերում թված անձերից ընտրական իրավունքներից կարող են օգտվել միայն նրանք, որոնց վերաբերմամբ կան ԽՍՀՄ կամ Հայաստանի ՍԽՀ կառավարության համապատասխան ակտեր, ինչպես և սպիտակ բանակների նախկին սպաներից և զինվորական աստիճանավորներից նրանք, որոնք հետագայում յեղել են Կարմիր բանակի շարքերում և գործոն մասնակցություն են ունեցել Խորհրդային Հանրապետությունների զինված պաշտպանության մեջ կամ որոնք ներկայումս գտնվում են զինվորական ծառայության մեջ կարմիր բանակում։

**Ծանոթություն 2.**—Դաշնակցական կառավարության բանակի նախկին սպաներից և զինվորական աստիճանավորներից ընտրական իրավունքից զրկվում են նրանք, ովքեր ակտիվ կերպով մասնակցել են խորհրդային իշխանության դեմ մղված քաղաքացիական կռիվներում։

լ) Նախկին ոստիկանության, ժանդարմերիայի հատուկ կորպուսի և պահնորդական բաժանմունքի ծառայողները և գործակալները, Ռուսաստանի թագավորական տան անդամները, ինչպես և բոլոր անձինք, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ղեկավարել են ոստիկանության, ժանդարմերիայի և պատժիչ մարմինների գործունեությունը թե ցարական իրավակարգի և թե հակահեղափոխական կառավարությունների օրոք.

խ) բոլոր դավանանքների և աղանդների կրոնական պաշտամունքների նախկին և այժմյան սպասավորները,

ինչպես՝ աբեղաները, քահանաները, սարկավագները, տեր-բացուները, մոլլաները, ռաբբինները և այլ անուն կրող անձինք, անկախ նրանից, թե ստանում են արդյոք նրանք վարձատրություն իրենց պաշտոնավարության համար, թե ոչ․

ծ) վարչական կարգով տարագրվածները, ինչպես և այն անձինք, վորոնց մասին կայացել են դատավճիռներ, վորոնցով նկատի առնելով նրանց կապը հանցավոր միջավայրի հետ, նրանք զրկվել են իրենց նախկին բնակության վայրում ապրելու իրավունքից, նաև դատական վճիռներով իրավազրկման յենթարկվածները։

**Ծանոթություն.** – Այն անձինք, վորոնք գտնվում են ազատազրկման վայրերում, իբրև քննության կամ դատական յենթակա և պատիժ կրողներ այնպիսի դատավճիռներով, վորոնք կապված չեն իրավազրկման հետ չեն կարող մասնակցել խորհուրդների ընտրություններին՝ ազատազրկման վայրերում գտնված ամբողջ ժամանակամիջոցում։

կ) Սահմանված կարգով հոգեպես հիվանդ և խելագար ճանաչվածները։

## ԳԼՈՒԽ IV

## ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՎԱՅԵԼՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

15. Ընտրական իրավունքներից չեն կարող զրկվել հետևյալ կատեգորիաների անձինք, յեթե այդ անձինք զրկված չեն ընտրական իրավունքներից այլ հիմունքներով, վորոնք նախատեսված են ՀՍԽՀ Սահմանադրությամբ․

ա) կարմիր բանակայինները և զինվորական ծառայողները․

բ) հողագործ գյուղացիները, վորոնք իրենց տնտեսության մեջ կիրառում են մի մշտական բանվորի վարձու աշխատանք առանձնահատուկ հանգամանքներում, ինչպես՝ հիվանդություն, զորակոչ, միլիցիայի ծառայություն, աշխատավորական սեզոնային աշխատանքների գնալը, հասարակական պաշտոնի կոչվելը, վորը պահանջում է տնտեսությունից հեռանալ և այլն, տնտեսության տվյալ դրության ամբողջ ժամանակամիջոցում․

գ) հողագործ գյուղացիները, վորոնք դաշտային աշխատանքների միջոցին կարճ ժամանակով վարձում են վոչ ավելի քան 2 բանվոր հացահատիկները, խոտը, այգիները, բամբակ և այլ տեխնիքական բույսերը ջրելու, բերքը հավաքելու և նման այլ աշխատանքներ կատարելու համար։

**Ծանոթություն.**—Ընտրական իրավունքից չեն զրկվում այն անձինք, վորոնք վորպես բացառություն և կլիմայական կամ մթնոլորտային այլ աննպաստ պայմանների կամ բերքը լավացնելու պահանջների հետևանքով կիրառում են ժամանակավոր բանվորների աշխատանք, բանեցնելով օրական և 2 բանվորից ավելի, սակայն այն հաշվով, վոր սեզոնի ընթացքում կիրառած վարձու աշխատանքը 100 բանվորական օրից ավելի չլինի։

դ) հողագործ գյուղացիները, վորոնք գնում են սեզոնային աշխատանքի և այդ ժամանակամիջոցում դիմում են մի վարձու բանվորի աշխատանքի օգնության այն պայմանով, յեթե ընտանիքում ուրիշ աշխատունակ անդամ չկա․

ե) սակավազոր հողագործ գյուղացիները, վորոնք ձմեռ ժամանակ գնում են կողմնակի աշխատանքի, վորի շնորհիվ թե ժամանակավորապես հեռանում են իրենց տնտեսությունից և թե ստիպված են լինում ժամանակավորապես մշակներ վարձել, յեթե ընտանիքում ուրիշ աշխատունակ անդամ չկա․

զ) անասնապահ գյուղացիները, վորոնք օգտվում են հովիվների վարձու աշխատանքից, յեթե հովվի աշխատանքը օժանդակ բնույթ է կրում, և միաժամանակ տնտեսության ամենօրյա աշխատանքի մեջ մասնակցություն ունեն նրա մյուս աշխատունակ անդամները․

է) յերկրագործ գյուղացիները, վորոնք գյուղատնտեսության հետ միատեղ ունեն արհեստագործական կամ

*արդյունաբերական ձեռնարկություններ այն միակ դեպքում, երբ նրանց տնտեսության մեջ վարձու աշխատանք չի կիրառվում, և եթե միաժամանակ աշխատավոր գյուղացու եկամտի հիմնական աղբյուրը գյուղատնտեսությունն է, և այն պայմանով, եթե այս հրահանգի մյուս հոդվածներով նա չի զրկվում ընտրական իրավունքից.*

*թ) այն անձինք, որոնք վարում են աշխատավորական տնտեսություն և վաճառում են շուկայում իրենց տնտեսության արդյունքները.*

*ժ) արտադրական ձեռնարկությունների վարձակալները, որոնք վարձու աշխատանք չեն կիրառում և վարձով վերցրած ձեռնարկություններում աշխատում են իրենք և իրենց ընտանիքի անդամները, և եթե այս հրահանգի մյուս հոդվածներով նրանք չեն զրկվում ընտրական իրավունքից.*

*ի) տնայնագործներն ու արհեստավորները, որոնք վարում են աշխատավորական տնտեսություն առանց վարձու աշխատանք կիրառելու (կամ աշխատանքը դրսում կատարել տալով), ինչպես նաև նրանք, որոնք արտադրության պայմանների շնորհիվ օգտվում են մեկ չափահաս բանվորի կամ ոչ ավելի քան երկու աշակերտի վարձու աշխատանքից։*

**Ծանոթություն 1.** *Աշխատավորական տնտեսության հիմնական հատկանիշը այս դեպքում վարձու աշխատանքի օժանդակ բնույթը և ընտանիքի մյուս ներկա աշխատունակ անդամների պարտադիր մասնակցությունն է նրա ամենօրյա աշխատանքներին.*

**Ծանոթություն 2.**— *Արտադրական պայմաններ ասելով հասկացվում են միայն տեխնիքական պայմանները, երբ ինքը արհեստի տեսակը պայմանավորում է վարձու բանվոր պահելու անհրաժեշտությունը (օրինակ՝ մրճահարը դարբնի համար).*

**Ծանոթություն 3.**— *Եթե այս կետի հիման վրա աշխատավորական տնտեսություն վարող տնայնագործներն ու արհեստավորները բացի երկու աշակերտից ունեն նաև*



*իշխանության համապատասխան մարմինների կողմից անապաստանների թվից նրանց հանձնված աշակերտներ, և եթե աշակերտների ընդհանուր թիվը չորսից ավելի չէ, այդ հանգամանքը չի կարող հիմք ծառայել տնայնագործների ու արհեստավորների հիշյալ կատեգորիային ընտրական իրավունքից զրկելու.*

*լ) իր ժամանակին մոբիլիզացիայի կարգով սպիտակ բանակների շարքերը կանչված բանվորները, աշխատավոր գյուղացիները, տնայնագործները և արհեստավորները.*

*խ) այն անձինք, որոնք տոկոսներ են ստանում աշխատավորական ավանդներից և պետական, կոմունալ ու կոոպերատիվ փոխառությունների պարտատոմսերից, այն պայմանով, որ այդ եկամուտները չկազմեն նրանց գոյության հիմնական աղբյուրը, և եթե այդ անձինք չեն զրկվում ընտրական իրավունքից այլ հիմունքներով.*

*ծ) այն անձինք, որոնք առանձնահատուկ պայմաններից հարկադրված պարապում են մանր առևտրով, այն է՝ աշխատանքի և պատերազմի հաշմանդամները, որոնք առևտուր են անում Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի ձրի արտոնագրերով, գործազուրկ բանվորները և ծառայողները, որոնք վերցնում են 1-ին կարգի արտոնագրեր, եթե այդ զբաղմունքը նրանց համար ժամանակավոր է.*

*կ) այն անձինք որոնք վարձով կամ կրոնական համայնքների ընտրությամբ զբաղվում են կրոնական պաշտամունքների և կրոնական ընկերությունների շենքերի վարչատնտեսական և տեխնիքական սպասարկությամբ, այն է՝ պահապանները, ծառաները, ժամկոչները, երգիչները և այլն, ինչպես նաև ծխական խորհուրդների և համայնքների անդամները, եթե այդ անձինք չեն զրկված ընտրական իրավունքից ՀՍԽՀ Սահմանադրության այլ հոդվածներով.*

*ի) ազատ պրոֆեսիաների տեր անձինք, վորոնք զբաղվում են հանրոգուտ աշխատանքով և չեն զրկվում ընտրական իրավունքից ՀՍԽՀ Սահմանադրության այլ հոդվածներով.*

*ձ) ՀՍԽՀ Սահմանադրությամբ և այս հրահանգի համապատասխան կետերով ընտրական իրավունքներից զրկված անձանց ընտանիքների անդամները այն դեպքում, յերբ նրանք նյութական կախում չունեն ընտրական իրավունքներից զրկված անձերից, և նրանց գոյության աղբյուրը կազմում ե ինքնուրույն հանրոգուտ աշխատանքը։*

## ԳԼՈՒԽ V.

## ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

*16. Այն անձինք, վորոնք ՀՍԽՀ Սահմանադրության համաձայն զրկված են ընտրական իրավունքներից, ինչպես վոստիկանության, ժանդարմների կորպուսի, պատժիչ մարմինների նախկին ծառայողները, սպիտակ սպաները և այլն (այս հրահանգի 14 հոդ. «ի» և «լ» կետերը), կարող են առանձին դեպքերում վերականգնել իրենց ընտրական իրավունքները Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության հատուկ վորոշումներով, յեթե այդ անձինք ներկայումս զբաղվում են արտադրական և հանրոգուտ աշխատանքով և ապացուցել են իրենց լոյալությունը Խորհրդային իշխանության վերաբերմամբ։*

*17. Այն անձինք, վորոնք պատկանելիս են յեղել շահագործող դասակարգին և զրկված են ընտրական իրավունքներից (կալվածատերերը, բուրժուազիան, կրոնական պաշտամունքների սպասավորները), կարող են վերականգնել իրենց ընտրական իրավունքներն այն դեպքում, յեթե նրանք վոչ պակաս քան յերեք տարվա ընթացքում պարապում են արտադրական և հանրոգուտ աշխատանքով և ապացուցել են իրենց լոյալությունը Խորհրդային իշխանության վերաբերմամբ,— գավառային ընտրական հանձնաժողովների վորոշումներով և Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության հաստատությամբ։*

*18. Այս հրահանգի 16 հոդ. հիշված անձինք իրենց ընտրական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումներն անհրաժեշտ վավերաթղթերի հետ միասին տալիս են տեղական խորհրդին, վորն իր յեզրակացության հետ ուղղում ե համապատասխան ընտրական հանձնաժողովին։*

## ԳԼՈՒԽ VI.

## ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*19. Գյուղական և քաղաքային խորհուրդները կատարում են ընտրական իրավունքներից զրկված անձանց մշտական անվանական հաշվառումը յուրաքանչյուր գյուղի և քաղաքի համար առանձին։*

*20. Ընտրական իրավունքներից զրկված անձանց հաշվառումը կատարվում ե փաստաթղթի բնույթ կրող տեղեկությունների հիման վրա.*

*ա) դատարանով ընտրական իրավունքներից զրկվածների և իրենց մշտական բնակավայրերից դատարանների կողմից տրտաքսման դատապարտվածների վերաբերմամբ,—դատավճիռների պատճենների կամ համապատասխան դատական մարմինների տեղեկությունների հիման վրա.*

*բ) շահառության նպատակով վարձու աշխատանք կիրարկող, ինչպես և անաշխատ հասույթով ապրող անձանց վերաբերմամբ,—նրանց կողմից հասութահարկ և*

1003
14692





ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Публичная Библиотека

արհեստահարկ վճարած լինելու մասին ֆինանսական մարմիններից ստացված տեղեկությունների հիման վրա և ապահովագրական տուրքերի վճարման մասին ապահովագրական դրամարկղներից ստացված տեղեկությունների հիման վրա, և այլն.

գ) առևտրով զբաղվող անձանց վերաբերմամբ—նրանց կողմից արտոնագրեր վերցնելու և նրանց կապալով տրված առևտրական շենքերի մասին՝ ֆինանսական մարմինների տված տեղեկությունների հիման վրա.

դ) խելագարների և հոգեկան հիվանդների վերաբերմամբ,—նրանց խելագար կամ հոգեկան հիվանդ ճանաչելու վերաբերյալ՝ առողջապահության մարմինների արձանագրությունների կամ այդ արձանագրությունների վավերացրած պատճենների հիման վրա.

ե) նախկին ոստիկանության ծառայողների և գործակալների և այս հրահանգի 14 հոդ. հիշված բոլոր այլ անձերի վերաբերմամբ,—վարչական մարմինների կամ գավառակային գործադիր կոմիտեների և գյուղական խորհուրդների տված տեղեկությունների և Պետական Քաղաքական Վարչության տեղեկությունների հիման վրա։

21. Այն դեպքում, յերբ տեղական խորհուրդը վորևե աղբյուրից տեղեկություններ է ստանում այս կամ այն անձնավորության ընտրական իրավունքներից զրկված կատեգորիաներից մեկին պատկանելու մասին, կատարում է այդ տեղեկությունների փաստական ստուգում, և յեթե նրանք հաստատվում են, տվյալ անձին մտցնում է ընտրական իրավունքներից զրկվելու յենթակա անձանց ցուցակի մեջ։

22. Ընտրական հանձնաժողովները քաղաքային և գյուղական խորհուրդների ներկայացրած ցուցակների և տվյալների հիման վրա կազմում են ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները։



Ընտրական հանձնաժողովները (գյուղական և քաղաքային) ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները կազմելիս՝ պարտավոր են անհատաբար ստուգել այս կամ այն անձին ընտրական իրավունքներից զրկված անձանց կատեգորիան դասելու ճշտությունը այս հրահանգի 20 հոդ. հիշված փաստաթղթերի բնույթ կրող տեղեկությունների հիման վրա։

23. Ընտրական հանձնաժողովը հրապարակում է ընտրական իրավունքներից զրկված անձանց ցուցակները վոչ ուշ, քան համապատասխան խորհրդի ընտրությունների սկզբից 20 որ առաջ, անպայման փակցնելով այն աչքի ընկնող վայրերում, հայտարարելով ժողովներում, մամուլի մեջ և այլն։

24. Ընտրական հանձնաժողովը ընտրական իրավունքներից զրկված անձանց՝ իր կազմած ցուցակից մի օրինակ ուղարկում է գյուղերում գյուղական խորհրդին, իսկ քաղաքներում քաղաքային խորհրդին, յերկրորդ և յերրորդ օրինակը—վերադաս ընտրական հանձնաժողովին և վերադաս գործադիր կոմիտեյին։

## ԳԼՈՒԽ VII.

## ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԴԵՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏՎԱԾ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

25. Այն անձինք, վորոնք ընտրական հանձնաժողովների վորոշումներով մտցված են ընտրական իրավունքներից զրկվածների ցուցակների մեջ, կարող են գանգատ տալ այդ վորոշումների դեմ ցուցակը հրատարակելուց կամ փակցնելուց հետո մի շաբաթվա ընթացքում։ Գանգատները տրվում են այն ընտրական հանձնաժողովին, վորը կազմել է ցուցակը։

26. Գյուղական ընտրական հանձնաժողովները՝ ստանալով գանգատը, պարտավոր են 3 օրվա ընթացքում ուղարկել այն իրենց յեզրակացությամբ վերադաս ընտրական հանձնաժողովին։

27. Գյուղական ընտրական հանձնաժողովների վորոշումների դեմ տված գանգատները, վորոնք մտել են գավառակային ընտրական հանձնաժողովը, քննվում են յերեք օրվա ընթացքում։ Գավառակային ընտրական հանձնաժողովը, յեթե բավարարում է գանգատը, ուղարկում է այն իր վորոշման հետ միասին գյուղական ընտրական հանձնաժողովին՝ գանգատավորին հայտնելու համար, իսկ մերժման դեպքում,—ուղարկում է գանգատը գավառային ընտրական հանձնաժողովին, վորը նույնպես յերեք օրվա ընթացքում պարտավոր է քննել գանգատը և վորոշում հանել կամ ստորադաս հանձնաժողովի վորոշումը հաստատելու կամ գանգատը բավարարելու մասին։

Գավառային ընտրական հանձնաժողովի վորոշումը հաղորդվում է ստորադաս ընտրական հանձնաժողովին և հայտարարվում է գանգատավորին։

28. Քաղաքների և քաղաքային խորհուրդներ ունեցող քաղաքային ու բանվորական վայրերի քաղաքացիների գանգատները տրվում են քաղաքային ընտրական հանձնաժողովներին, վորոնք պարտավոր են քննել գանգատը յերեք օրվա ընթացքում և մերժման դեպքում ուղարկել իրենց յեզրակացության հետ գավառային հանձնաժողովին, վորը նույն ժամանակամիջոցում, ինչպես և քաղաքայինը, պարտավոր է քննել գանգատը և վորոշում կայացնել։

Գավառային ընտրական հանձնաժողովի վորոշումը հաղորդվում է քաղաքային ընտրական հանձնաժողովին և հայտարարվում է գանգատավորին։

29. Ընտրական իրավունքներից զրկելու դեմ տված գանգատները կարող են քննվել կենտրոնական ընտրական



հանձնաժողովի և Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից հսկողության կարգով։

30. Ընտրական հանձնաժողովի աշխատանքները վերջանալուց հետո ընտրական իրավունքներից զրկված անձանց գանգատների վերաբերյալ հարցերը լուծվում են համապատասխան խորհուրդների և գործադիր կոմիտեների կողմից։

## ԳԼՈՒԽ VIII.

## ԸՆՏՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

31. Խորհուրդների անդամների ընտրությունները տեղի յեն ունենում ընտրական ժողովներում։

32. Ընտրական ժողովը գումարվում է ընտրական հանձնաժողովի կամ նրա լիազորի կողմից։ Ընտրական ժողովի գումարման օրվա և տեղի մասին ընտրողներին տեղեկություն է տրվում անվանական ծանուցագրերով վոչ ուշ քան 5 օր առաջ։

33. Քաղաքներում, քաղաքատիպ և բանվորական վայրերում ընտրական ժողովները գումարվում են ըստ արտադրական կամ արհեստակցական միավորների (ձեռնարկությունների, հիմնարկությունների և արհեստակցական միությունների)։ Այն քաղաքացիները, վորոնք չեն մտնում ձեռնարկությունների մեջ և արհեստակցական միությունների անդամ չեն, այն է՝ տնայնագործները, տնային տնտեսությամբ զբաղվողները, կառապանները և այլն, մասնակցում են ընտրություններին կամ մյուս ընտրողների հետ ըստ արտադրական կամ արհեստակցական միավորների, կամ ըստ տերրիտորիալ միավորների (քաղաքային շրջաններ, քաղաքամասեր և այլն)։

34. Այն գյուղական խորհուրդների ընտրությունները, վորոնք ընդգրկում են մի քանի գյուղեր, կատարվում են ըստ առանձին գյուղերի, յեթե այդ գյուղերում

բնակչության թիվը բավարար է մի պատգամավոր ընտրելու համար, և մի քանի գյուղերի միացյալ ժողովներում, յեթե նրանց բնակչությունը սակավաթիվ է և նրանց միջև յեղած տարածությունը աննշան է։

Ագարակային և հատվածական տնտեսություն վարող ընտրողները միանում են այն մերձակա գյուղին, վորը մտնում է ընտրվող գյուղխորհրդի շրջանի մեջ։

Գյուղական վայրերում խոշոր գյուղերը գյուղական խորհրդի ընտրությունների համար բաժանվում են մի քանի ընտրական թաղամասերի, և այդ դեպքում ազգային փոքրամասնությունների կոմպակտ խմբերը կարող են առանձնացվել, վորպես հատուկ ընտրական թաղամասեր ըստ ազգային հատկանիշի։

Ընտրական թաղամասերը գյուղական վայրերում պետք է ընդգրկեն 500 բնակչից վոչ ավելի։

Ծանոթություն.— Քաղաքային վայրերից դուրս գտնված այն խորհրդային տնտեսությունները, ինչպես և գործարանների ծառայողներն ու բանվորները, վորոնք չունեն իրենց խորհուրդները, խորհուրդների ընտրությունների համար միանում են ընտրվող գյուղխորհրդի շրջանի մեջ մտնող մոտակա գյուղին։

35. Ընտրական ժողովներին կարող են ներկա լինել միայն ընտրական իրավունք ունեցող անձինք։

36. Ընտրական ժողովներում պետք է կատարվի ընտրություններին ներկայացած բոլոր անձերի հաշվառում։

37. Ընտրական ժողովը համարվում է կայացած, յեթե ներկա յե վոչ պակաս քան այն անձանց 35 տոկոսը, վորոնք իրավունք ունեն մասնակցելու տվյալ ընտրական ժողովին։

38. Այն ընտրական ժողովը, վորին ներկայացել է տվյալ ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների 35 տոկոսից պակաս, համարվում է չկայացած, և այդ մասին կազմվում է արձանագրություն, վորը



կցվում է ընտրական գործին, իսկ ընտրական ժողովը հետաձգվում է մինչև մոտիկ օրերից մեկը, հայտարարելով այդ մասին ընտրողներին։

39. Ընտրական ժողովը բաց է անում ընտրական հանձնաժողովի կողմից դրա համար լիազորված անձը, իսկ ղեկավարում է նախագահությունը ընտրական հանձնաժողովի լիազորի նախագահությամբ։ Նախագահության կազմի մեջ մտնում են ընտրական հանձնաժողովի լիազորը և ժողովի կողմից ընտրված յերկու անձ։ Ընտրական ժողովը բանալուց հետո նախագահը պարտավոր է.

ա) ծանոթացնել ժողովականներին ՀՍԽՀ Սահմանադրության 85 և 86 հոդվածներին և ընտրությունների նորմաներին ու կարգին (հրահանգի հոդ. 31— 45).

բ) հայտարարել ժողովին ընտրողների թիվը.

գ) հայտարարել տվյալ ընտրական ժողովում ընտրական իրավունքից զրկված անձանց ցուցակը.

դ) հայտարարել ընտրական ժողովի առաջ, ինչպես և ընտրական ժողովի ընթացքում ստացված ցուցակները և առանձին թեկնածուների անունները և ազգանունները, մատնանշելով, թե ում կողմից են ստացված ցուցակները։

40. Յուրաքանչյուր ընտրական ժողովում ընտրվելիք անձանց թիվը վորոշվում է տեղական ընտրական հանձնաժողովի կողմից՝ ըստ համապատասխան ընտրական նորմաների։

41. Ընտրությունների ժամանակ քվեարկությունը կատարվում է կամ ցուցակներով, կամ անհատաբար, ընտրական ժողովի վորոշման համաձայն։

Ծանոթություն 1.— Ընտրական հանձնաժողովները և նրանց լիազորներն իրավունք չունեն իրենց կողմից առաջադրելու ընտրողներին վոչ առանձին թեկնածուներ և վոչ էլ թեկնածուների ցուցակներ։

Ծանոթություն 2.— Թեկնածուների ցուցակներ կամ առանձին թեկնածուներ կարող են առաջարկվել թե հաս-

րական, կուսակցական և արհեստակցական կազմակերպությունների և թե առանձին քաղաքացիների կողմից, ինչպես ընտրական ժողովում, այնպես էլ մինչև ընտրական ժողովը մամուլի կամ փակցնելու միջոցով հայտարարելով։ Ցուցակներով քվեարկություն կատարելիս չի արգելվում ցուցակներում նշանակված առանձին թեկնածուներին մերժել և ուրիշ թեկնածուներով փոխարինել։

42. Ընտրությունները կատարվում են բաց քվեարկությամբ։ Խորհուրդների անդամ ընտրված են համարվում ընտրական ժողովին ներկա յեղող ընտրողների ձայների առնվազն կես մասն ստացած անձինք։

Նորընտիր խորհրդի առաջին կազմակերպչական նիստը հրավիրում է ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը. այդ նիստում ընտրվում են գործադիր մարմինները (նախագահ) և նշանակվում է քարտուղար։

43. Ընտրական ժողովները, բացի խորհրդի անդամներից (պատգամավորներից), ընտրում են նաև փոխանդամներ՝ անդամների մեկ յերրորդի չափով։

Փոխանդամներն ընտրվում են խորհրդի անդամներից անջատ քվեարկությամբ։

Ծանոթություն.— Այն վայրերում, վորտեղ ընտրական թաղամասերի թիվը ավելի յե քան ընտրվող խորհրդի փոխանդամների թիվը, վերջինների ընտրությունների կարգը սահմանվում է վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից։

44. Ընտրական ժողովի ընթացքի մասին կազմվում և ստորագրվում է արձանագրություն ընտրական ժողովի նախագահության կողմից։

45. Ընտրությունների վերաբերյալ բոլոր դիմումները և գանգատները գրավոր և բանավոր կերպով տրվում են ընտրությունն ավարտելուց հետո 7 օրվա ընթացքում տվյալ ընտրությունները ղեկավարող ընտրական հանձնաժողովին, վորը պարտավոր է իր բա-



ցատրությունների հետ միասին յերեք օրվա ընթացքում այդ գանգատներն ուղարկել վերադաս ընտրական հանձնաժողովին։

Վերադաս ընտրական հանձնաժողովը պարտավոր է քննել այդ գանգատները և դիմումները ստանալուց հետո 7 օրվա ընթացքում։

Այն դեպքում, յերբ ընտրական հանձնաժողովը գտնում է, վոր գանգատները հիմնավոր են և անհրաժեշտ է բեկանել ամբողջ ընտրությունները, նա այդ մասին հարց է հարուցում համապատասխան գործադիր կոմիտեյի առաջ, իսկ ընտրությունների մասնակի բեկանման անհրաժեշտության դեպքում, այդ մասին ինքն է վորոշում կայացնում և հայտնում ստորադաս ընտրական հանձնաժողովին վերընտրություն կատարելու համար։

46. Ընտրական հանձնաժողովներն իրենց աշխատանքները վերջացնելուց հետո՝ ընտրությունների վերաբերյալ բոլոր նյութերը հանձնում են համապատասխան խորհրդին կամ գործադիր կոմիտեյին։

## ԳԼՈՒԽ IX.

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՅԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

47. Խորհուրդների համագումարները հրավիրվում են համապատասխան գործադիր կոմիտեների կողմից և կազմվում են.

ա) գավառակային համագումարները — գավառակի տերրիտորիայի վրա գտնվող բոլոր խորհուրդների ներկայացուցիչներից, վորոնք ընտրվում են խորհուրդների կողմից ՀՍԽՀ Սահմանադրության 69 հոդ., «բ» կետով սահմանված նորմայով և թվով.

բ) գավառային համագումարները—քաղաքների խորհուրդների և խորհուրդների գավառակային համագումար-

ների ներկայացուցիչներից ՀՍԽՀ Սահմանադրության 69 հոդ. «ա» կետով սահմանված նորմայով.

գ) Հայաստանի ՍԽՀ խորհուրդների համագումարը— քաղաքային խորհուրդների և խորհուրդների գավառային համագումարների ներկայացուցիչներից ՀՍԽՀ Սահմանադրության 24 հոդ. սահմանված նորմայով։

48. Համագումարների ընտրությունների կանոնավորությունը և պատգամավորների լիազորությունների ճշտությունն ստուգելու համար յուրաքանչյուր համագումար ընտրում է մանդատային հանձնաժողով այն թվով, որը որոշում է ինքը համագումարը։

49. Խորհուրդների համագումարները մանդատային հանձնաժողովների զեկուցումների հիման վրա որոշումներ են կայացնում համագումարների ընտրությունների կանոնավորության և պատգամավորների լիազորությունների ճշտության մասին։

**Ծանոթություն 1.**—Վերընտրվող գործադիր կոմիտեի այն անդամները, որոնք համագումարի պատգամավորներ չեն, օգտվում են համագումարում խորհրդակցական ձայնի իրավունքով։

**Ծանոթություն 2.**—Համագումարների նախագահությունների և գործադիր կոմիտեների կազմի մեջ, նաև իբրև վերադաս համագումարների ներկայացուցիչներ կարող են ընտրվել ոչ միայն համագումարների և խորհուրդների անդամները, այլ և ընդհանրապես բոլոր քաղաքացիները, որոնք վայելում են ընտրական իրավունք՝ անկախ նրանց բնակության վայրից և աշխատանքից։

50. Համագումարի զբաղմունքների ընթացքում մինչև գործադիր կոմիտեի նոր կազմի ընտրությունը՝ իշխանության գործադիր մարմին շարունակում է մնալ նախկին կազմի գործադիր կոմիտեն, որի ֆունկցիաները դադարում են միայն նոր կազմի գործադիր կոմիտեի առաջին նիստը գումարելուց հետո։



51. Խորհուրդների համագումարը վերջանալուց հետո գումարվում են նորընտիր գործադիր կոմիտեի կազմակերպչական նիստերը նախկին կազմի հետ միասին։ Այդ նիստերում ընտրվում են գործադիր կոմիտեի նախագահը և նախագահությունը, նաև բոլոր բաժինների վարիչները։

**Ծանոթություն 1.**—Գործադիր կոմիտեները իրենց նախագահությունները և նախագահին ընտրում են անպայման իրենց կազմի անդամներից։

**Ծանոթություն 2.**—Գործադիր կոմիտեի նախկին կազմի անդամները և բաժինների վարիչները, որոնք նոր կազմի մեջ ընտրված չեն, այդ նիստում օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

## ԳԼՈՒԽ X.

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԳԱՎԱՌԱԿԱՅԻՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

52. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովներն ընտրվում են գյուղական խորհրդի ընտրության հետ միաժամանակ ընտրական ժողովներում՝ յերեք անդամի և յերկու փոխանդամի կազմով։

**Ծանոթություն.**—Այն գյուղերում, որտեղ ընտրական թաղամասերի քանակն ավելի յե քան ընտրվող վերստուգիչ հանձնաժողովի անդամների և նրանց փոխանդամների թիվը, վերջինների ընտրության կարգը սահմանվում է վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից։

53. Գավառակային վերստուգիչ հանձնաժողովներն ընտրվում են խորհուրդների համագումարների կողմից և կազմվում են 3-ից մինչև 5 անդամներից և յերկու փոխանդամներից։

54. Գյուղական և գավառակային վերստուգիչ հանձնաժողովների ընտրությունները կատարվում են խորհրդի կամ գործադիր կոմիտեի անդամների և փոխանդամների ընտրություններից անջատ՝ հատուկ քվեարկությամբ։

**Ծանոթություն 1.**—Գյուղական վերստուգիչ հանձնաժողովների անդամ չեն կարող ընտրվել համապատասխան գյուղական խորհրդի անդամներն ու փոխանդամները, այլև տվյալ վերստուգիչ ժանձնաժողովի վերահսկողության յենթակա հիմնարկությունների պաշտոնյաները։

**Ծանոթություն 2.**—Գավառակային վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել.

ա) գավառակային գործադիր կոմիտեյի անդամները և փոխանդամները.

բ) այն անձինք, վորոնք մոտ ազգականություն կամ խնամիություն ունեն գավառակային գործադիր կոմիտեյի անդամների կամ փոխանդամների հետ.

գ) գավառակային գործադիր կոմիտեյի տեխնիքական աշխատակիցները.

դ) գավառակային հողային հանձնաժողովների անդամները։

## ԳԼՈՒԽ XI.

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵԿԱՆԵԼՈՒ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

55. Ընտրությունները բեկանվում են հետևյալ հիմունքներով.

ա) ՀՍԽՀ Սահմանադրության և այս հրահանգի նորմաների խախտման դեպքում.

բ) այն դեպքում, յերբ ընտրությունը ղեկավարող մարմինների ապօրինի գործողությունների դեմ քաղաքացիների տված գանգատները հիմնավոր կը ճանաչվեն։

56. Նախորդ հոդվածում հիշված հիմունքներով ընտրությունները կարող են բեկանվել.

ա) ամբողջությամբ, այսինքն խորհրդի անդամների ամբողջ կազմի վերաբերմամբ.



բ) մասնակի, այսինքն խորհրդի առանձին անդամների վերաբերմամբ—ըստ առանձին ընտրական շրջանների։

57. Ընտրությունները բեկանվում են ամբողջությամբ, յեթե պատգամավորների կեսից ավելին ընտրված ե այս հրահանգի կանոնները խախտելով։

Ընտրությունները բեկանվում են մասնակի, առանձին ընտրական շրջանների վերաբերմամբ, յեթե այս հրահանգի կանոնների խախտումը տեղի յե ունեցել միայն մի կամ մի քանի ընտրական շրջաններում։

58. Ընտրություններն ամբողջությամբ բեկանելու հարցը վորոշվում ե վերադաս գործադիր կոմիտեների կողմից, իսկ մասնակի բեկանման հարցը—վերադաս ընտրական հանձնաժողովների կողմից։

59. Ընտրությունների բեկանման մասին հայտարարվում ե ի գիտություն հանրության կամ հրապարակելով տեղական մամուլում կամ ընտրողների ժողովներում։

60. Ընտրությունների բեկանման դեպքում նոր ընտրությունները կատարվում են այս հրահանգով սահմանված կարգով։

61. Ընտրություններն ամբողջությամբ բեկանելու դեպքում նոր ընտրություններ կայացնելու համար այս հրահանգով սահմանված կարգով կազմվում են համապատասխան նոր ընտրական հանձնաժողովներ, իսկ ընտրությունների մասնակի բեկանման դեպքում առանձին ընտրական շրջաններում՝ այդ շրջաններում նոր ընտրություններ կայացնելու համար նշանակվում են նոր լիազորներ։

62. Այն դեպքերում, յերբ առանձին պատգամավորները հեռանում են ընտրողների կողմից հետ կանչվելու, մահվան, բնակավայրը փոխելու, ընտրական իրավունքները կորցնելու և այլ պատճառներով, նրանք փոխարինվում են այն շրջանի համար յեղած թեկնածուներով, վորի համար ընտրված եր հեռացած անդամը, իսկ թեկնածուների բա-

ցուցակության դեպքում կատարվում են լրացուցիչ ընտրություններ։

63. Գործադիր կոմիտեների սահմանված ժամանակից շուտ վերընտրությունը կամ լրացուցիչ ընտրությունն անհրաժեշտ դեպքերում կատարվում է խորհուրդների համապատասխան արտակարգ համագումարներում, վորոնք հրավիրվում են ՀՍԽՀ Սահմանադրության 70 հոդ. կարգով։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Ձև № 1.

Կիրառվում է գյուղական խորհրդի կողմից վորպես մշտական ձև։

Գործադրվում է ընտրական ծանուցագրեր ուղարկելու և ընտրական իրավունք ունեցողների վերաբերյալ տեղեկանք տալու համար։

Ամեն տարի ընտրություններից առաջ սառւցվում է ընտրական Հանձնաժողովի կողմից։

Կազմված է՝ տարի..................
ամիս..................
Թիվ..................

# ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

........................................................................ ընտրողների
(Նշանակել գյուղը, գավառակը և գավառը)

| №№ ըստ կարգի | Ազգանուն, անուն և հայրանուն | Ծննդյան թիվը | Սեռ | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ — (գյուղացի-հողագործ, բատրակ, գյուղատնտեսական բանվոր, գործարանի բանվոր, տնային-տնտեսուհի, տնայնագործ, արհեստավոր, ուսանող, ծառայող, վարչատնտեսական պաշտոն վարող նախկին գործարանի բանվոր կամ աչքի վրա աշխատող գյուղացի, գյուղատնտես, հողաչափ, ուսուցիչ, բժիշկ, դատավոր, այլ ծառայող) | Ընտրողների ցուցակից հանելու ժամանակի մասին ծանոթություն և դուրս հանելու պատճառները | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |

Կազմված է տարի ..................

ամիս ..................

թիվ ..................

Ձև № 2.

Կիրառվում է քաղաքային խորհրդի կողմից յուրաքանչյուր ընտրական շրջանի համար առանձին։

Գործադրվում է ընտրական ծանուցագրեր ուղարկելու և ընտրական իրավունք ունեցողների վերաբերյալ տեղեկանքներ տալու համար։ Ամեն տարի ընտրություններից առաջ սառւգվում է Ընտրական Հանձնաժողովի կողմից։

# ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

.................................................................... ընտրողների

(Նշանակել ընտրական շրջանը, քաղաքը, գավառը)

| №№ ըստ կարգի | Ազգանուն, անուն և հայրանուն | Ծննդյան թիվը | Սեռը | Սոցիալական դրությունը (բանվոր, ծառայող, տնայնագործ, արհեստավոր, գյուղացի, ուսանող, ազատ արհեստով զբաղվող, տնային տնտեսուհի և այլն)։ | Ընտրողների ցուցակից հանելու ժամանակի մասին ծանոթություն և դուրս հանելու պատճառները | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ (Նշանակել Աշխարհայում հաշվառման յենթարկված գործազուրկներից նրանց, վոր պրոֆմ. անդամ չեն) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |

Ձև № 3.

Կիրառվում է գյուղական կամ քաղաքային խորհրդի կողմից վորպես մշտական ցուցակ։

Գործադրվում է ընտրություններից առաջ՝ ա) ընտրական իրավունքից զրկվածների ցուցակները կազմելու, բ) նրանց ընտրական իրավունքից զրկված լինելու մասին ծանուցագրեր ուղարկելու և գ) ձայնազուրկների մասին տեղեկություններ տալու համար։

Ընտրական հանձնաժողովը ամեն տարի ստուգում է ցուցակը, մտցնում է ցուցակի մեջ պատճառաբանված փոփոխություններ ու մակագրում ստուգման մասին։

# ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

........................................ ընտրական իրավունքից զրկված անձանց

(Նշանակել գյուղը, գավառակը, գավառը, քաղաքը)

| №№ ըստ կարգի | Ազգանուն, անուն և հայրանուն | Տարիք | Սեռ | ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 1) Շահառւթյան նպատակով վարձու աշխատանք շահագործողներ, 2) անաշխատ հասույթով ապրողներ, 3) մասնավոր առևտրականներ, առևտր. միջնորդներ և վերավաճառողներ, 4) կրոն. պաշտ. սպասավորներ և կուսակրոններ, 5) Նախկին վոստիկան. գործակալ. և ծառայողներ, 6) դատարանով դատապարտվածներ, 7) խելագար ճանաչված և խնամակալության տակ գտնվածներ, 8) ձայնազուրկի խնամքի տակ գտնվող ընտ. անդամ. նրանք, վոր 18 տ. և բարձր են. 9) նրանք, վոր ձայնից զրկվել են ՀՍԽՀ ընտր. հրահանգի համաձ. հոդվածներով։ | Վո՞ր ժամանակից է զրկված ընտրական իրավունքից | Հիշատակել այն փաստաթղթերը, վորոնց հիման վրա յենթակա յե ընտրական իրավունքից զրկվելու | Ցե՞րբ է հանվել ձայնազուրկների ցուցակից | Ցուցակներից հանելու պատճառները. մահ, ընտրական իրավունքի վերականգնում, տեղափոխություն, դատարանով վորոշված ժամկետի լրանալը, առողջանալ և այլն | Հիշատակել այն փաստաթղթերը, վորոնց հիման վրա տվյալ անձը հանվել է ցուցակներից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | | | | | | | | | |

Ձև № 4.

Փակցվում է աչքի ընկնող տեղերում վոչ ուշ քան ընտրություններից 20 օր առաջ։

Գյուղական վայրերում կարդացվում է համայնական ժողովներում։

Կազմվում է ամբողջ քաղաքի կամ գյուղի համար։

# ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

................................................ ընտրական իրավունքից զրկված անձանց

(Նշանակել գյուղը, քաղաքը, գավառակը և գավառը)

| №№ ըստ կարգի | Ազգանուն, անուն, հայրանուն | Ծննդյան թիվը | Սեռը | ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ<br>1) Շահառության նպատակով վարձու աշխատանք շահագործողներ, 2) Անաշխատ հասույթով ապրողներ, 3) մասնավոր առևտրականներ և առևտրական միջնորդներ, 4) կրոնական պաշտամունքի սպասավորներ և կուսակրոններ, 5) նախկին վոստիկանության գործակալներ և ծառայողներ, 6) դատարանով դատապարտվածներ, 7) խելագար ճանաչվածներ և խնամակալության տակ գտնվողներ, 8) ծայնազուրկի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամներից նրանք, վոր 18 տարեկան և բարձր են, 9) նրանք վոր ձայնից զրկվել են ՀՍԽՀ ընտրական հրահանգի համապատասխան հոդվածներով։ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |



Ձև № 5.

**ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք**

Ընտրական ծանուցագրի համարը պետք է համապատասխանի տվյալ ընտրողի ընտրողների անվանացուցակում նշանակված համարին։

Ուղարկվում է յուրաքանչյուր ընտրողին վոչ ուշ քան ընտրական ժողովից 5 օր առաջ։

# ԸՆՏՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ №.................

Քաղաքացի ________________________________________

(Ազգանունը, անունը, հայրանունը)

Հասցեն՝ ________________________________________

Ընտրական Հանձնաժողովը հրավիրում է Ձեզ 192 թ. ________ ________ ամսի ______-ին ________________ օրը, ժամը ______-ին ________________________ շենքում, վոր գտնվում է ________________________ կայանալիք ________________________ ________________ Խորհրդի ընտրությանը մասնակցելու համար։

Ընտրական ժողովին ներկայանալով, պետք է Ձեզ մոտ ունենաք այս ծանուցագիրը և հանձնեք քարտուղարին։

**Ընտրական Հանձնաժողովի Նախագահ՝**

________________________________________

№............ Ընտրական ծանուցագիրը ստացա........................

(Ստորագրություն)

192 թ.................................(ամիս).................................(Թիվ)

(Ստորագրությունը վերադարձվում է Ընտրական Հանձնաժողովին)

Ձև № 6.

Կազմվում է յերկու օրինակ. մեկը կցըվում է գյուղխորհրդի ընտրական գործին, մյուսն ուղարկվում է Գավառակային Ընտրական Հանձնաժողովին։

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

................ գավառի ................ գավառակի ................

գյուղխորհուրդի հաշվետու ժողովի

«........» ........................192 թ.

| ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ գյուղի, բնակիչների, մասնակցողների և նրանց ակտիվության մասին | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բնակավայրի անունը | Բնակիչների թիվը | Ընտրողների թիվը | | Մասնակցողների թիվը | | Ժողովի ակտիվությունը | |
| | | Տղամարդ | Կին | Տղամարդ | Կին | Տրված հարցերի թիվը | Արտահայտվող. թիվը |
| | | | | | | | |

Նախագահում էր Ընտր. Հանձն. լիազոր՝ . . . . . . . .

Ժողովի նախագահության անդամներ՝
1 . . . . . . . . . .
2 . . . . . . . . . .
3 . . . . . . . . . .

Քարտուղար՝ ........................

## ՕՐԱԿԱՐԳ

1. Գյուղխորհրդի հաշվետու զեկուցումը.
2. Գյուղ-վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումը.
3. Գավառակային գործկոմի ինֆորմացիոն զեկուցումը (խոշոր գյուղխորհրդի համար).
4. ................................................

Ժողովը սկսվեց ժ. «  » -ին, վերջացավ ժ. «  » -ին



| Լսեցին | Որոշեցին |
|---|---|
| 1. Գյուղխորհրդի հաշվետու զեկուցումը։<br>(Զեկուցող՝ գյուղխորհրդի նախագահ ընկ. ........................ )<br>Ըստ եյության խոսողների դիտողությունները գյուղխորհրդի թերությունների մասին հակիրճ արձանագրել։<br>Զեկուցման շուրջ տրվեցին «  » հարցեր.<br>Զեկուցման շուրջ արտահայտվեցին «  » հոգի։ | 1. ա) Տալ գնահատականը։<br>բ) Ընտրել հանձնաժողով բաղկացած ընկ. ընկ. ........................<br>և հանձնարարել նրանց ժողովականների արած դիտողությունների հիման վրա մշակել հրահանգ վերընտրվելիք գյուղխորհրդի աշխատանքների մասին և ներկայացնել ընտրական ժողովին՝ ի քննություն։ |
| 2. Գյուղ վերստուգիչ հանձ. գործունեության մասին։<br>(Զեկուցող՝ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ ընկ. ........................ )<br>Զեկուցման շուրջ տրվեցին «  » հարցեր.<br>Զեկուցման շուրջ արտահայտվեցին «  » հոգի։ | 2. ա) Տալ գնահատականը։<br>բ) Հանձնարարել նույն հանձնաժողովին ժողովականների արած դիտողությունների հիման վրա վերընտրվելիք գյուղխորհրդի աշխատանքների համար մշակվելիք հրահանգի մեջ մտցնել նաև առաջադրություններ գյուղ վերստուգիչ հանձնաժողովի անելիքների մասին։ |
| 3. Գավառակային գործկոմի ինֆորմացիոն զեկուցումը։<br>(խոշոր գյուղերում)<br>(Զեկուցող՝ ընկ. ........................ )<br>Զեկուցման շուրջ տրվեցին «  » հարցեր.<br>Զեկուցման շուրջ արտահայտվեցին «  » հոգի։ | 3. Ընտրողների ցանկությունները արձանագրել։ |

Նախագահ հաշվետու ժողովի՝

Նախագահության անդամներ՝
1.
2.
3.
4.

Քարտուղար՝

Ձև № 6—ա.

*Կազմվում է յերկու օրինակ. մեկը կցվում է գյուղխորհրդի ընտրական գործին, մյուսը ուղարկվում է Գավառակային Ընտրական Հանձնաժողովին։*

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

.................... գավառի .................... գավառակի

.................... գյուղխորհրդի ընտրական ժողովի

192 թ. .................... «..........»-ին

Տեղեկություններ գյուղխորհրդի, իսկ յեթե միացյալ գյուղխորհուրդ է նրա յենթակա գյուղերի, ազգաբնակության և ընտրողների մասին

| №№ ըստ կարգի | Բնակավայրի անունը | Բնակիչների թիվը | Ընտրողների թիվը | Ներկա յեղողների թիվը | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Տղամարդ | Կին |
| 1 | ........ | ........ | ........ | ........ | ........ |
| 2 | ........ | ........ | ........ | ........ | ........ |
| 3 | ........ | ........ | ........ | ........ | ........ |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | ........ | ........ | ........ | ........ |

Նախագահում եր Ընտրական Հանձնաժողովի լիազոր՝ . . . . . . .

1 . . . . . . . . . .

Ժողովի նախագահության անդամներ՝ 2 . . . . . . . . . .

3 . . . . . . . . . .

Քարտուղար՝ . . . . . . . .

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Գյուղխորհրդի անդամների ընտրությունը.
2. Գյուղխորհրդի փոխանդամների ընտրությունը.
3. Վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը.
4. Վերստուգիչ հանձնաժողովի փոխանդամների ընտրությունը.

Ժողովը սկսվեց ժ. «     »-ին, վերջացավ ժ. «     »-ին.



| Լ ս ե ց ի ն | Վ ո ր ո շ ե ց ի ն |
|---|---|
| Ընտրական հրահանգին համապատասխանող օրենքների պարզաբանումը։ | |
| 1. Գյուղխորհրդի անդամների ընտրությունը։<br>Առաջարկված եյին հետևյալ թեկնածուները՝<br>Ձայն տվողների թիվը։ Թեր . . դեմ . .<br>ՀԿԿ (բ) բջիջից<br>1. . . . . . . . . . .<br>2. . . . . . . . . . .<br>3. . . . . . . . . . .<br>. . . . . . . կողմից<br>. . . . . . . .<br>Առաջարկված են ժողովի կողմից . . .<br>. . . . . . . . . . . . . . . .<br>. . . . . . . . . . . . . . . . | 1. Գյուղխորհրդի անդամ ընտրվեցին<br>1. . . . . . . . .<br>2. . . . . . . . .<br>3. . . . . . . . .<br>4 . . . . . . . .<br>և այլն։ |
| 2. Գյուղխորհրդի փոխանդամների ընտրությունը։<br>Առաջարկված եյին հետևյալ թեկնածուները՝<br>Ձայն տվողների թիվը։ Թեր . դեմ . .<br>ՀԿԿ (բ) բջիջից<br>1. . . . . . . .<br>2. . . . . . . .<br>3. . . . . . . .<br>. . . . . . կողմից<br>. . . . . . . .<br>Առաջարկված են ժողովի կողմից . . .<br>. . . . . . . . . . . . . . . .<br>. . . . . . . . . . . . . . . . | 2. Գյուղխորհրդի փոխանդամ ընտրվեցին<br>1. . . . . . .<br>2. . . . . . . .<br>3. . . . . . . .<br>4. . . . . . . .<br>և այլն։ |

| Լսեցին | Վորոշեցին |
|---|---|
